Արձանագրություն N 2

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.11.2020թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Քալանդարյան, Գ. Սաֆարյան, Ա. Մնացականյան, Գ. Խարբության

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. **Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն**

(Ռ. Աբրահամյան)

Հարցադրում N 1

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝

Խնդրում եմ տալ պարզաբանում ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/5 ծածկագրով գնանշման հայտի վերաբերյալ առաջացած ներքոնշյալ հարցի վերաբերյալ՝

1.Նշել եք, որ Ձեզ հարկավոր է A4 ձևաչափի թուղթ հետևյալ պարամետրերով՝

Թուղթ չկավճած, A դասի, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Ձևաչափը՝ A4 (210x297 մմ): Համապատասխան ISO 9001, 14001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին: Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, կոշտությունը MD՝ առնվազն 100, կոշտությունը CD՝ առնվազն 35, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի, առնվազն՝ 169 CIE, հաստությունը՝ համաձայն ISO 534 ստանդարտի՝ առնվազն 108 Մկմ, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի առնվազն 94տոկոս, անհարթությունը՝ 120մլ/րոպեից ոչ ավել (համաձայն ISO 8791/2), խոնավությունը՝ առնվազն 3,9տոկոս: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ (պլյուս մինուս 0.05կգ): 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ՝ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի որակի, ինչպես նաև տեխնիկական բնութագրին համապատասխան լինելու մասին հավաստագիր:

1. Խնդրում եմ պարզաբանել. ինչով է պայմանավորված A4 ձևաչափի թղթի առնվազն 169CIE սպիտակության, առնվազն 94տոկոս անթափանցելիության և 120մլ/րոպեից ոչ ավել անհարթության պայմանները: A դասի թուղթ է համարվում 161CIE-ից բարձր (մինչև 175CIE) սպիտակություն, 90%-ից բարձր անթափանցելիություն և 100մլ/րոպեից բարձր անհարթություն ունեցող թուղթը: Փեյփր Հաուս ՍՊ Ընկերությունը, հանդիսանում է Ավստրալիան Փեյփր ՍՊ Ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, որը ներմուծում է Reflex մակնիշի A4 չափսի պրեմիում դասի թուղթ, որը ունի 165CIE սպիտակություն, 92տոկոս անթափանցելիություն և 160մլ/րոպե անհարթություն: Հետևաբար խնդրում եմ փոփոխել պահանջվող պարամետրերը, ինչը հնարավորության կտա Փեյփր Հաուս ՍՊ Ընկերությանը ևս մասնակցելու Ձեր կողմից հայտարավարծ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/5 ծածկագրով մրցույթին

Պարզաբանում N 1

Հայտնում ենք՝

Ի պատասխան Ձեր կողմից պահանջված պարզաբանման,

Պարզաբանում՝ A4 ձևաչափի թուղթ, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար, որը ունի 165-169 CIE սպիտակություն, 92-94 տոկոս անթափանցելիություն և 120-160մլ/րոպե անհարթություն:

Հարցադրում N 2

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝

Խնդրում ենք Ձեզ 165 CIE –ի պարզաբանով նշումը դարձնել 161CIE , ինչպես նաև մյուս 2 չափորոշիչները իջեցնել համապատասխան A դասի թղթի պահանջներին

Պարզաբանում N 2

Հայտնում ենք՝

Պարզաբանում՝ A4 ձևաչափի թուղթ, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար, որը ունի 161-169 CIE սպիտակություն, 92-94 % անթափանցելիություն և 120-160մլ/րոպե անհարթություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ռ. Աբրահամյան
Անդամներ՝		Մ. Քալանդարյան
		Գ. Սաֆարյան
		Գ. Խարբության
		Ա. Մնացականյան
Համակարգող՝		Վ. Մեժունց